ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ԾՐԱԳԻՐ

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ _____

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿ _____հեռաուսուցում_____

ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԹԻՎԸ_____

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾ_____18.09.18-26.11.28_____

ՈՒՍՈՒՑԱՆՈՂ/ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ__ Արա Խզմալյան, Արսեն Նիկողոսյան_____

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին աշխարհում նկատվում է փախստականների քանակի հսկայական աճ, ինչն էական ազդեցություն է ունեցել և ունի նաև Հայաստանի Հանրապետության վրա, որը բնակչության մեկ շնչի հաշվով փախստականների և տեղահանված անձանց քանակով առաջատարներից է Եվրոպայում: Անձին փախստականի կարգավիճակ շնորհելու որոշումը ենթադրում է բարդ գործընթաց ինչպես փաստերի ուսումնասիրման ու գնահատման, այնպես էլ փախստականների պաշտպանության ոլորտում միջազգային և ներպետական իրավունքի նորմերի համակողմանի վերլուծության առումով: Որպես կանոն համապատասխան գործընթացը իրականացվում է միգրացիայի ոլորտում լիազորված պետական մարմնի կողմից, իսկ դրա հետ կապված դատական վեճերը քննվում են վարչական դատարաններում: Սակայն քրեական օրենսգրքով ապաստան հայցողների ու փախստականների մասով հատուկ դրույթները (329-րդ հոդվածի 3-րդ մաս), հանձնման գործընթացներում չվերադարձելիության սկզբունքի կիրառման առումով փախստականների մասով առկա հատուկ երաշխիքները, ինչպես նաև փախստականների իրավունքների պաշտպանության քրեադատավարական երաշխիքները, ենթադրում են փախստականների

իրավունքի առանցքային հասկացությունների, սկզբունքների և ընթացակարգերի լավ իմացության անհրաժեշտություն նաև համապատասխան գործընթացում ներգրավված մարմինների մասով:

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն դասընթացը նպատակ ունի ունկնդիրներին ապահովել փախստականների իրավունքի ոլորտում բազմակողմանի գիտելիքներով և տեղեկություններով (հատկապես կենտրոնանալով քրեական և քրեադատավարական ոլորտներում առկա հիմնահարցերի վրա), որոնց կիրառումն անհրաժեշտ է խնդրո առարկա հարցի տիրույթում արդարադատությունն արդյունավետ իրականացնելու համար:

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (նշել այն հիմնական գիտելիքներն ու/կամ հմտությունները, որոնց պետք է տիրապետի ունկնդիրը՝ դասընթացին հաջող մասնակցության դեպքում)

Յուրաքանչյուր ունկնդրի իմացության (դասին մասնակցության) հիմնական ցուցիչներն են ինքնաստուգիչ հարցերին տրված պատասխանները և կատարված առաջադրանքը (ըստ անհրաժեշտության): Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ունկնդիրը՝

- Կունենա գիտելիքներ փախստականների միջազգային իրավունքի զարգացման, դրա հիմնական աղբյուրների, ինչպես նաև փախստականների ու ապաստան հայցողների իրավական պաշտպանության հիմնական սկզբունքների ու երաշխիքների քրեաիրավական ու քրեադատավարական ասպեկտների վերաբերյալ:

- Ձեռք կբերի գիտելիքներ փախստականի կարգավիճակ շնորհելու, այն մերժելու և այդ կարգավիճակը դադարեցնելու հիմքերի ու չափանիշների, ինչպես նաև դրանց կիրառման հետ կապված ապացուցման հիմնախնդիրների մասին:

- Կկարողանա հստակ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բացառությունն այն անձանց նկատմամբ, ովքեր օգտվում են 1951թ. Կոնվենցիայի 31-րդ հոդվածով սահմանված երաշխիքից:

- Կկարողանա հստակ կիրառել 1951թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածով սահմանված և մարդու իրավունքի ոլորտի ՀՀ միջազգային պայմանագրերից բխող չվերադարձելիության սկզբունքը և դրանից սահմանված բացառությունները, այդ թվում՝ Եվրոպական դատարանի վերաբերելի որոշումների լույսի ներքո:

- Կիմանա քրեական գործով վարույթի շրջանակներում փախստականների իրավունքների պաշտպանության քրեադատավարական երաշխիքների մասին:

- Կկարողանա ձեռք բերած գիտելիքներն կիրառել (ըստ անհրաժեշտության) իր աշխատանքային գործունեության ընթացքում, մասնավորապես՝ փաստականների հետ կապված տարբեր խնդիրների լուծման գործում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ (նշել այն առանցքային գաղափարները կամ թեմաները, որոնք ներկայացվելու են հեռաուսուցման դասընթացում. դրանք կարող են արտահայտված լինել *դասընթացի ելքային արդյունքներում*, բայց կարող են լինել նաև լրացուցիչ հասկացություններ)

Սույն հեռաուսուցման դասընթացի հիմնական գաղափարները ներկայացվելու են համապատասխան դասերի/շաբաթների համար նախատեսված նյութերում: Ստորև հաջորդաբար ներկայացված են յուրաքանչյուր դասի/շաբաթվա նյութերում տեղ գտած հիմնական գաղափարներին վերաբերող թեմաները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 1. Փախստականների միջազգայնաիրավական պաշտպանության հիմնահարցի պատմությունը և համատեքստը: Փախստականների միջազգային իրավունքի հիմնական աղբյուրները: ՄԱԿ ՓԳՀ ստեղծումը, առաքելությունը և մանդատը

ԴԱՍ 2. «Փախստական» հասկացությունը և փախստականի կարգավիճակ շնորհելու հիմքերը

ԴԱՍ 3. Փախստականի կարգավիճակի տրամադրման բացառման պայմաններ: Երրորդ ապահով երկիր

ԴԱՍ 4. Փախստականի կարգավիճակի և ապաստանի դադարեցում

ԴԱՍ 5. Փախստականների պաշտպանությունը ՀՀ քրեական օրենսգրքի համատեքստում

ԴԱՍ 6. Չվերադարձելիության սկզբունքը

ԴԱՍ 7. Բացառություններ չվերադարձելիության սկզբունքից ԴԱՍ 8. Փախստականների իրավունքների պաշտպանության քրեադա-տավարական երաշխիքները քրեական գործի հարուցման և վարույթն իրականացնող մարմինների որոշումների բողոքարկման վերաբերյալ (Ընդհանուր մաս) ԴԱՍ 9. Փախստականների իրավունքների պաշտպանության քրեադատավա-րական երաշխիքները քրեական գործի հարուցման և վարույթն իրականացնող մարմինների որոշումների բողոքարկման վերաբերյալ (Հատուկ մաս) ԴԱՍ 10. Փախստականների իրավունքների պաշտպանության հատուկ երաշխիքներ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (նշել այն մեթոդները կամ միջոցները, որոնց կիրառումը կնպաստի հեռաուսուցման դասընթացի բովանդակության հասկացմանը: Օրինակ՝ վարժություններ, ինտերնետ ֆորումներ, վիրտուալ քննարկումներ և այլն:) Հեռաուսուցման դասընթացների պատշաճ հասկացման համար կիրառական նշանակություն ունի ինքնաստուգիչ հարցերի և առաջադրանքի մշակումն ու ներդնումը: Ինքնաստուգիչ հարցերին պատասխանելու և առաջադրանքը կատարելու միջոցով ունկնդիրները հնարավորություն են ստանում առավել խորությամբ հասկանալ ինչպես համապատասխան տեքստը, այնպես էլ դրա կիրառական արժեքը (օրինակ՝ առաջադրանքի պատշաճ կատարման համար տեքստի հասկացումը պարտադիր է):
Սույն հեռաուսուցման դասընթացի համար նախատեսվում է ինքնաստուգիչ հարցերի՝ որպես հասկացմանը նպաստող մեթոդի/միջոցի կիրառումը:
ՏԵՍԱՁԱՅՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ **(նշել հեռաուսուցման դասընթացի իրականացման համար անհրաժեշտ տեսաձայնային սարքավորումները: Օրինակ՝ համակարգիչ, պրոյեկտոր, DVD և այլն)** Հեռաուսուցման դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ են՝ 1. Համակարգիչ (ունկնդրման հարմարություններով)

2. Համացանց մուտք գործելու հնարավորություն (wi-fi սարքավորում և այլն)
ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱԶԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ (նշել այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են հեռաուսուցման դասընթացի յուրացման համար)* Տվյալ դասընթացի թեմաների յուրացման համար բավարար են բուհերի իրավաբանության ֆակուլտետների բակալավրիատի ծրագրերում ընդգրկված մասնագիտական առարկաների շրջանակներում ձեռքբերված գիտելիքները:
ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ Հեռաուսուցման դասընթացի ժամանակացույցը մանրամասն ներկայացված է ուսումնական պլանում: Հեռաուսուցման դասընթացի ընդհանուր տևողությունը 10 շաբաթ է (յուրաքանչյուր շաբաթ 4 ժամ ծավալով, ընդհանուր 40 ժամ ծավալով):

*** Աստղանիշով առանձնացված տողը կամ կետը պարտադիր չէ լրացնել:**